ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքը հայտարարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդ-վաճառք: Աճուրդը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերի 31-ին Արզնի համայնքապետարանի շենքում ժամը 12:00: Աճուրդի է ներկայացվում ստորև ընգրկված հողամասը ըստ գտնվելու վայրի, ծածկագրի, և մեկնարկային գնի՝

- 07-016-0201-0024 կադաստրային ծածկագրով , 0.06464 հա մակերեսով արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գուղատնտեսական օբյեկտների հողամաս – 2872000 / երկու միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար / ՀՀ դրամ:

Հողամասում առկա է մոտեցման ճանապարհ: Ջրագիծ և կոյուղի չկա:
Հողամասերը սերվիտուտով ծանրաբեռնված չեն:
Աճուրդին մասնակցելու համար ցանկացողները հայտին կից ներկայացնում են աճուրդի մասնակցության վճարի վճարման անդորրագիր 10000 / տասը հազար/ ՀՀ դրամ չափով և նախավճարի վճարման անդորրագիր՝ մեկնարկային գնի 50%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը: Աճուրդի քայլ է սահմանվում մեկնարկային գնի 5%-ը:
Հայտերն ընդունվում են մինչև ս/թ հոկտեմբերի 26-ը, ժամը 18:00:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արզնի համայնքապետարան /հեռախոս՝ 022294880/:

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

# Առավոտ
a r a v o t d a i l y

170/6942/ 3 հոկտեմբեր 2023 երեքշաբթի

ISSN 1829-2224

## Ցանկացած նոր վարչապետ ազատ կլինի «ջենտլմենական» խոստումներից

Իշխանության կողմնակիցները հեգնանքով եւ ագրեսիայի որոշակի աստիճանով հարցնում են՝ «ի՞նչ է, որ Նիկոլը գնաց, թուրքերը Ղարաբաղը հե՞տ են տալու»: Անկախ նրանից, թե ինչպես եւ ինչի համար է այս հարցը տրվում, դրան պետք է տալ ազնիվ պատասխան. Ո՛չ, տեսանելի ապագայում Արցախը հնարավոր չի լինի վերադարձնել: Դա չի նշանակում, սակայն, որ այդ հարցն ընդմիշտ փակվել է. այն չէր փակվել 1918 թվականին, չէր փակվել 1994-ին, չի փակվել նաեւ հիմա: Բայց եթե Փաշինյանը մնա, Հայաստանի Հանրապետության եւ հայաստանցիների հետ տեղի կունենա այն, ինչ տեղի է ունեցել Արցախի Հանրապետության եւ արցախցիների հետ:

Հիմա իշխանությունն ասում է՝ կհրելու ենք «խաղաղության

## Ադրբեջանցիները Գուգլի, Յանդեքսի քարտեզներում փորձում են փոխել հայկական բնակավայրերի անունները

### Քարտեզագետի տարզաբանումները

*«Դա վտանգավոր գործընթաց է, պետք է աչալուրջ հետեւել այդ ամենին, որ եթե մի բան լինի, պետք է Գուգլին գրվի՝ ինչ իրավունքով ես փոխել»,- Aravot.am-ի հետ զրույցում ասաց քարտեզագետ Ռուբեն Գալիչյանը: Տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոս-*




07-016-0201-0024
331